

Ծառայողական օգտագործման համար

Ֆինանսական միջնորդների շրջանակ (FIF) - ԱԼԳ «Կանայք բիզնեսում» (WiB) IV ծրագիր – ԱԿԲԱ ԲԱՆԿ (EFSD+ 1և 3)

Երկիր	Հայաստան
Ծրագրի համարը	54846
Բիզնես ոլորտ	Ֆինանսական հաստատություններ
Տեսակ	Մասնավոր
Բնապահպանական կատեգորիա	Ֆինանսական հաստատություն (ՖՀ)
Հաստատման ամսաթիվ	7-ը նոյեմբերի, 2023 թ.
Կարգավիճակը	Մասհանվող
Ծրագրի ամփոփ փաստաթղթի անգլերեն տարբերակի հրապարակման ամսաթիվը	10-ը նոյեմբերի, 2023 թ.

Տեղեկատվության հասանելիության մասին հրահանգի 1.4.2 (iii) բաժնի համաձայն. «Բանկի ղեկավարության կողմից հաստատված ենթածրագրերի համար, որտեղ Տնօրենների խորհուրդը պատվիրակել է հաստատման լիազորությունը, ծրագրի ամփոփ փաստաթուղթը պետք է Բանկի անդամ երկրին հրապարակվի համապատասխան «առարկություններ չկան» ծանուցման ժամկետի սկզբում՝ ՎՋԵԲ-ի ստեղծման Համաձայնագրի 13-րդ հոդվածի iii կետի համաձայն»:

Ծրագրի նկարագրություն

Մինչև 10 միլիոն ԱՄՆ դոլարի չափով առաջնային չապահովված վարկի տրամադրում ԱԿԲԱ բանկին՝ Արևելյան գործընկերության երկրներում «Կանայք բիզնեսում» (WiB) ծրագրի շրջանակներում կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկությունների ֆինանսավորման նպատակով:

Ծրագրի նպատակները

Առաջարկվող վարկը խթանելու է կանանց ձեռներեցությունը և կանանց մասնակցությունը բիզնեսում՝ դրամային ֆինանսավորման, առաջադեմ փորձի ու խորհրդատվության հասանելիությունը: Վարկը կընդլայնի ԱԿԲԱ բանկի հաճախորդների բազան և կշարունակի աջակցել ու խրախուսել նոր պրոդուկտների ձևավորումը տեղական բանկային հատվածում՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց կողմից ղեկավարվող ՓՄՁ-ներին ու միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման ծավալների աճին:

Ծառայողական օգտագործման համար

Ծառայողական օգտագործման համար

Անցումային շրջանի ազդեցություն

ETI միավորը՝ 80

Լինելով ՎԶԵԲ-ի չորրորդ վարկը ԱլԳ WiB ծրագրի շրջանակներում՝ ԱԿԲԱ Բանկին տրամադրվող WiB վարկը կշարունակի զարգացնել անցումային գործընթացի ներառականության ու մրցունակության բնութագրիչները:

Ներառական. Ծրագիրը հասցեագրելու է Հայաստանում ֆինանսավորման հասանելիության ներառականության մասով «միջին» աստիճանի գենդերային խզվածքը: Կանանց սեփականություն հանդիսացող ձեռնարկությունները կազմում են Հայաստանի բոլոր ձեռնարկությունների 33%-ը: Գենդերային խզվածքի զրոքալ համաթվով Հայաստանը 89-րդ տեղում է 156 երկրների շարքում, իսկ Արևելյան գործընկերության մյուս երկրների համեմատ երկրի միավորն ամենացածրերից է՝ 0.698 (Գլոբալ գենդերային խզվածքի զեկույց, 2022 թ.):

Մրցունակ. Ֆինանսական միջնորդների շրջանակի (FIF) շուկայի ընդլայնման նպատակներին համահունչ՝ ծրագիրը ՎԶԵԲ-ի բազմակի ֆինանսավորման միջոցով նպաստելու է Հայաստանում կանանց կողմից ղեկավարվող ՄՓՄՁ-ների վարկավորմանն ԱԿԲԱ-բանկի կողմից: Ակնկալվում է, որ այս գործարքը կխրախուսի ԱԿԲԱ Բանկին՝ ավելի ընդլայնել կանանց կողմից ղեկավարվող ՄՓՄՁ-ների վարկավորման ծավալներն ի լրումն ՎԶԵԲ-ի ներդրման, միաժամանակ շեշտադրելով տեղեկատվական աշխատանքը մարզերում ու նոր հաճախորդների ներգրավումը:

ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ

ԱԿԲԱ Բանկը ՎԶԵԲ-ի վաղեմի գործընկեր Բանկ է: Այն չորրորդ ամենախոշոր Բանկն է Հայաստանում՝ ընդհանուր ակտիվների և համախառն վարկային պորտֆելի ցուցանիշներով, որոնք 2023 թվականի երկրորդ եռամսյակի դրությամբ համակարգում կազմել են համապատասխանաբար 8% և 11%:

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

10,000,000.00 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր արժեքը

10,000,000.00 ԱՄՆ Դոլար

Ծառայողական օգտագործման համար

Ծառայողական օգտագործման համար

Հավելյալություն

Ֆինանսավորման կառուցվածքը. Ծրագիրը տեղական արժույթով երկարաժամկետ ֆինանսավորում է տրամադրելու ԱԿԲԱ բանկին մի շուկայում, որտեղ գերակշռում են կարճաժամկետ ակտիվներն ու պարտավորությունները:

Չափորոշիչների սահմանում. օգնել, որ ենթաձրագրերն ու հաճախորդներն ապահովեն ավելի բարձր չափորոշիչների կատարում: WiB վարկը հասցեագրելու է կանանց ՓՄՁ-ների համար առկա ֆինանսավորման բացն ու մասնավոր հատվածի կառույցների կամ այլ ՄՖԿ-ների կողմից այդ բացի լրացմանն ուղղված համալիր արձագանքի բացակայության խնդիրը: Հավելյալության մասին է վկայում տեխնիկական համագործակցության շրջանակներում տրամադրվող աջակցությունը և ռիսկերի ապահովագրական ծածկույթի առկայությունը, որը նախատեսված է կանանց ձեռներեցության՝ ոչ լիովին զարգացած հատվածի ֆինանսավորման ծավալներն ավելացնելու հարցում ԱԿԲԱ բանկին օգնելու համար: ԱԿԲԱ բանկը կօգտվի նաև ՎՋԵԲ-ի փորձից, որը վերջինս ձևավորել է ԱԼԳ երկրներում նախկինում իրականացրած փոքր բիզնեսի խորհրդատվական աշխատանքների ու առանձին WiB գործառնությունների, ինչպես նաև համապատասխան այլ գործողությունների շնորհիվ, որոնք իրականացվել են այն երկրներում, որտեղ ՎՋԵԲ-ն ունի ներկայություն:

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է ՖՀ (FI) կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն, 2019թ.): ԱԿԲԱ բանկի նախկին կատարողականը և առկա ներգործությունների պայմաններում բնապահպանական ու սոցիալական (Բ և Ս) ամենամյա հաշվետվողականության ցուցանիշները մինչ օրս բարձր են եղել: ԱԿԲԱ բանկը պետք է շարունակի ապահովել համապատասխանությունը Գործունեության 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջներին (PR) և Կորպորատիվ վարկերի, ՓՄՁ-ների ու միկրո վարկերի մասով ՎՋԵԲ-ի բնապահպանական ու սոցիալական ընթացակարգերի և TFP բնապահպանական ու սոցիալական ընթացակարգերի պահանջների կատարումը և պարտավոր է լինելու բնապահպանական ու սոցիալական տարեկան հաշվետվություններ ներկայացնել ՎՋԵԲ-ին:

Ծառայողական օգտագործման համար

PUBLIC

Ծառայողական օգտագործման համար

Տեխնիկական համագործակցություն և դրամաշնորհային ֆինանսավորում

ՏՀ. ԱլԳ WiB ՏՀ ծրագիրը պարունակում է երկու փոխկապակցված բաղադրիչ.

(i) ՄՖՀ-ների՝ Ծրագիրն ու մի շարք փոխհատվող գործողություններ իրականացնելու կարողությունների զարգացում օժանդակելով Ծրագրի առաջխաղացմանն ու կառավարմանը, և

(ii) առաջադեմ փորձի հասանելիություն կանանց կողմից ղեկավարվող ՓՄՁ-ներին (խորհրդատվություն փոքր բիզնեսների համար): Դոնորական ֆինանսավորում կտրամադրի Շվեդիյան կամ ԵՄ-ն:

Ոչ ՏՀ: Համաներդրումային դրամաշնորհներ/կոնցեսիոն ֆինանսավորում: Ծրագիրը կօգտվի Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամի (EFSD+) ծրագրի առաջարկած երկու գործիքներից՝ տրամադրված ֆինանսավորման մասով Առաջին կորստի ռիսկի ապահովագրական ծածկույթ ի օգուտ ՎՋԵԲ-ի և ենթավարկերի մասով Առաջին կորստի ռիսկի ապահովագրական ծածկույթ ի օգուտ ԱԿԲԱ բանկի:

Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամի կողմից (EFSD+):

Ընկերության կոնտակտային տվյալները

Անժելիկա Բադրամյան

Anzhelika.Baghramyan@acba.am

+37410318888

www.acba.am

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0002, Արամի 82-84

Ծրագրի ամփոփ փաստաթղթի վերջին թարմացման ամսաթիվը

10-ը նոյեմբերի, 2023թ.

Անցումային շրջանի ընկալումը

Անցումային շրջանի ազդեցության գնահատման վերաբերյալ ՎՋԵԲ մոտեցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները տե՛ս [այստեղ](#):

Ծառայողական օգտագործման համար

PUBLIC

PUBLIC

Ծառայողական օգտագործման համար

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎՋԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎՋԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎՋԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#)

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

[ԲՍՔ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎՋԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դիտարկելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից՝ ՎՋԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Ծառայողական օգտագործման համար

PUBLIC

Ծառայողական օգտագործման համար

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [EUE](#)-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հանրայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք

Ծառայողական օգտագործման համար

Ծառայողական օգտագործման համար

այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎՋԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎՋԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Ծրագրի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ՇՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի, Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎՋԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ՇՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ՇՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել՝ արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#)՝ կամ իր [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել [Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը](#)՝ իմանալու ավելին ՇՀԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես [Դիմում ներկայացնել](#) ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ՇՀԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com՝ ՇՀԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

Ծառայողական օգտագործման համար